ռերի տերևները հագիվ շարժվում
են, մինչև փոթորիկ, մրրիկ, վորոնք
կողտում են ծառերը, արմատախիչ

են անում նրանց, չուս են տալիս ու
քանդում շենքերը և այլն:

Դասատունը դիտում է յերեսաների
պատրաստած յեղանակի որացույցը,
վորակը մինչև այժմ չի նշանակված
քամու ուղղությունը, և պայմանա-
վորվում են սրանից հետո նշել նաև
քամու ուղղությունը: Տրվում են խոն-
դիր, պարզել՝ ինչպե՞ս է փոխվում
յեղանակը քամու ուղղության ա-
ռնչությամբ:

5-րդ ժամ. Ողի առաձգակու- նությունը

Ողի առաձգականության փորձը
տեսնելուց առաջ անհրաժեշտ է
պարզել կարծր մարմինների առաձ-
գականության դադափարը:

Յերեսաներին տրվում է մատիտով
դրածը ջնջելու ունակ և նույն չափի
մի կտոր հում կավ: Յերեսաները
թե մեկը և թե մյուսը սեղմում են
ձեռքի մեջ, նկատում են, վոր սեղ-
մումը դադարեցնելուց հետո ունի-
նը ընդունում է իր նախկին ձևը,
իսկ կավը, վոր. նա մնում է սղմված
վիճակում: Ռետին հատկությունը,
այն է՝ ընդունել իր նախկին ձևը,
կոչվում է առաձգականություն:

Ռետինն առաձգական է, իսկ կավը՝
վոչ առաձգական: Յերեսաները ա-
ռաձգական և վոչ առաձգական ա-
ռարկաների որինակներ են բերում:
Ողի առաձգականության վրա յե
հիմնված ողային ատրճանակի կա-
ռուցվածքը: Սաղի փետուրը մաք-
րած և յերկու ծայրերը կտրած
(կարելի չէ դորձադրել նաև ապակի-
յա խողովակ) ծածկվում են կար-
տոֆելի խցանով: Սկզբից մի ծայրն
ձեռք խրում կարտոֆելի կտորի
մեջ, իսկ հետո, մյուսը: Փայտյա
ձողի միջոցով սեղմելով կարտոֆելի
կտորը փետուրի կամ ապակյա խո-
ղովակի մեջ, մենք ստիպում ենք
ողին սեղմվել և դուրս չարտել մյուս
խցանը:

6-րդ ժամ. Ողի ընդարձակու- նը տաքանալուց

Բարակ պատերով դատարկ շշի

կամ կոլբայի բերանը ծածկում ենք
խցանով, վորի միջով անց է կացրած
ապակյա բարակ խողովակ: Ոցանը
ծածկում ենք մոմով կամ ստևարի-
նով, այնպես, վոր նրա միջով ող
չանցնի: Ապակյա խողովակի դրսի
ծայրը մտցնում ենք բաժակի մեջ
լցրած ներկած ջրի մեջ: Յերեսա-
ներից վորևե մեկն իր ձեռքերի ա-
փելում սեղմում է (բայց վոչ ու-
ժեղ) շիշը կամ կոլբան: Ձեռքի տա-
քությունից տաքանում է շիշը և նրա
միջի սղը, վորը խողովակից բռնի-
նեով դուրս է գալիս բաժակի ներ-
կած ջրի յերսին: Յեթե խողովակի
ծայրը բաժակի ջրից դեռ չհանած ժա-
մանակ, շշի կամ կոլբի վրա ջուրը կամ
մանուկ (սառցենք) կտեսնենք,
վոր ջուրը խողովակի միջով բաժա-
կից վրանցնի շշի մեջ: Յեղրակացու-
թյուն. ողը տաքանալուց լայնանում
է, իսկ սառչելուց սեղմվում է:

Ողի այս նույն հատկությունը
ապացուցող 2-րդ փորձը կայանում է
հետևյալում՝ դատարկ շշի բերանը
ծածկում ենք կարտոֆելի խցանով
(շշի բերանը մտցնում ենք կարտո-
ֆելի կտորի մեջ) և հետո շիշը տա-
քացնում կրակի վրա: Քիչ հետո
խցանը դուրս է թռչում շշի բերա-
նից:

7-րդ ժամ. Ողապարիկի կազ- մությունը և գրույց առաջին քոնիչ- ների մասին

Դասատունը պատմում է առաջին
թոնիչի մասին, տալիս է դադա-
փար այն ժամանակվա ողապարիկի
կազմության մասին (ողապարիկի
մեջ կար տաք ող) ընթերցում գրու-
յից:

Յեղրակակման ժամանակ դատա-
տուն նշում է, վոր այժմ ողապարիկ-
ները լցվում են վոչ թե տաք ողով,
այլ մի ամբիլի թեթեվ դադով:

8-րդ ժամ. Ողի ջերմության վառ կազմությունը

Վերցնել նույն մեծության, բայց
տարբեր հաստության արակյա յեր-
կու բաժակ. մեկը հաստ պատերով,
իսկ մյուսը՝ ըստ հնարավորության

բարակ պատերով: Յերկու բաժակ-
ներն էլ լցնել ձյունով, և ձյունը
հալտար սեղմել: Բաժակնե-
րը ծածկել բաժակապնակներով:
Սրանցից մեկը, (վորը բա-
րակ պատեր ունի), դնել ընդարձակ
մի անոթի մեջ (մուրաբե ապակյա
անոթ), տակը դնելով յերկուսից-
յերեք լուցկու դատարկ տուփեր,
վորպեսզի բաժակը չբխի ընդար-
ձակ անոթի հատակին, ապա անոթը
ծածկել ամսելով: Մյուս բաժակը,
վորն ունի հաստ պատեր, նույնպես
բաժակապնակով ծածկել և դնել ա-
նոթից վոչ հետո:

Այս բոլորը պետք է տեղափոխել
տաք տեղում՝ վառած վառարանի
մոտ: Մոտավորապես յերկուսից
մինչև յերեք ժամից հետո փորձի
արդյունքը պարզ կլինի: Հաստ պա-
տերով բաժակի մեջ դրված ձյունն
ամբիլի շուտ կհալչի, քան այն, վորը
դրված էր անոթի մեջ:

Փորձի արդյունքների մասին յերե-
սաների հետ ունեցած դասատույի
դրույցից պարզվում է, վոր մի բա-
ժակում ձյունը տաքությունից
պաշտպանված էր հաստ պատով, իսկ
մյուսում՝ յերկու բարակ պատերով
(բաժակի և անոթի պատեր). բայց
այդ յերկու պատերի միջև կար ող:

Յեղրակացություն. ողը ջերմու-
թյան վառ հաղորդիչ է: Փորձից
հետո դրույցը տարվում է այն ուղ-
ղությամբ, թե ի՞նչպես է ողապարիկ-
ում ողի այդ հատկությունը չե-
քերի կառուցման ժամանակ, ձեռք
սենյակները տաք պահելու համար
(յուսամուտների կրկնափեղկերի):
Պարզվում է, թե ի՞նչու բոլե հա-
ղուտն ամբիլի տաք է քան բամբակ-
յա հագուստը, ի՞նչու թաղիքե վոտ-
նամաններն ամբիլի տաք են պահում,
քան կաշվե կոշիկները և այլն:

9-րդ ժամ. Քամու աշխատանքը բնության մեջ

Դասատույի պատմվածքը և
ընթերցումը ծովի վրա առաջացող
փոթորիկի, մրրիկի, անապատում
տեղի ունեցող պտուտահողմերի մա-

սին: Պատմվածքը և ընթերցումն անպայման պետք է զուգորդվեն համապատասխան նկարների ցուցադրումով: Քամին տեղափոխում է ավաղը մի տեղից մի այլ տեղ, ճիշտ այնպես, ինչպես մեզ մոտ ձմեռ ժամանակ քամին տեղափոխում է ձյունը և առաջացնում է ձյունակույտեր: Քամու միջոցով դոյացած ավաղի մեծ կույտերը կոչվում են ավաղակույտեր (դյուներ): Ավաղը դեռնին ամբարացնելու և հարեան բերքատու հողերը ավաղով ծածկվելուց պաշտպանելու համար մարդիկ ավաղի վրա տնկում են ծառեր և թփուտներ: Ծառերի և թփուտների արմատները պահում են ավաղը և թույլ չեն տալիս քամուն ավաղը տեղափոխի մի ուրիշ տեղ: Քամին նպաստում է լեռնային տեսակների քայքայմանը: Լեռնային լեռնազանգուտ արևմտյան (ծովից փչող) ուժեղ քամիների ժամանակ առաջանում է ջրհեղեղ: Դառարանում և տանը դրքերի ընթերցում (որինակ՝ Ռիբկին «Բնության մեծ և ահեղ յերեմիայի թերթերը»):

10-րդ ժամ, Քամու ուժի ոգտագործումը

Դասատույի ընթերցումն ու գրույցը այն մասին, թե ինչպես են մարդիկ ոգտագործում քամու ուժը՝ գետերի, լճերի և ծովերի վրա առաքատանավեր, հողմաղացներ, հողմաշաղթիչներ և այլն. դրադարանային գրքերի տնային ընթերցում:

11-13-րդ ժամ. Ողի բաղադրությունը

Վերցնում ենք մի բաժակ և վառվող մոմ ու հարց ենք տալիս յերևյալներին՝ ի՞նչ կլինի մոմը, յեթե նրան ծածկենք բաժակով: Յերևյալները տարբեր պատասխաններ են տալիս: Կատարում ենք փորձը. մոմը ծածկում ենք բաժակով. մի փոքր այրվելուց հետո մոմը հանդչում է: Դնում ենք յերկրորդ փորձը՝ վերցնում ենք յերկու վառվող մոմ և ծածկում ենք տարբեր մեծության բաժակներով. (լավ կլինի, յեթե մեկը ծածկվի մուրաբի ապակյա մեծ առթով): Յեղրակացութուն. այն

բաժակում, վորտեղ ող չատ կա, այնտեղ մոմն ավելի յերկար ժամանակ և վառվում: Այրման համար հարկավոր է ող: Խոր արևելի կամ թափ հատակին կրպցընենք 18—20 սմ. յերկարության մոմ. արևելի մեջ լցնենք ջուր՝ 8—10 սմ. խորությամբ: Մոմը վառում ենք և ծածկում հատակը կտրած չչով, վորի նեղ բերանը ամուր ծածկված է խցանով: Քիչ հետո մոմն այրելով սպառելով չլի մեջ յեղած ողը, հանդչում է: Ծչի մեջ ջրի մակերեսը բարձրանում է և ափսեյում դառնում ջրի մակերեսից բարձր է կանգնում: Յեղրակացութուն՝ մոմի այրման ժամանակ չլի մեջ դառնալով ողի մի մասը չքացավ: Դասատուն յերեսաներին հայտնում է, վոր ողը բաղկացած է յերկու գլխավոր բաղկացուցիչ մասերից՝ թթվածնից և բորականից (աղոտ): Թթվածինը գործադրվեց այրման համար, իսկ բորականինը մնաց չլի մեջ: Ողում սրանցից փոքր է արելի չատ. թթվածինը, թե բորականինը: Այն բանից, թե չլի վոր մասն է լցվել ջուր, յերեսաները կհասկանան, վոր ողի մեջ բորականին (աղոտի) քանակին ավելի չատ է, քան թթվածնի քանակը: Յեթե վառենք փայտյա ձողիկը, և վերելի փորձի ժամանակ ոգտագործած չլի խցանը հանենք ու վառվող ձողիկն արադորեն իջեցնենք չլի մեջ կտեսնենք, վոր վառվող ձողիկն անմիջապես հանդչում է:

Յեղրակացութուն՝ բորականին մեջ կրակը հանդչում է: Հետո դասատուն վերցնում է մի շիշ, վորը նախորդը լցված է թթվածնով, (թթվածին ստանալու փորձը չի ցուցադրվում, վորովհետև ավելի հասակի յերեսաների համար դա դժվար հասկանալի կլինի) և չլի մեջ իջեցնում ենք յերկաթաղարի վրա ամրացրած այրվող ածուխի կտոր: Նկատում ենք, վոր ածուխի կտորը ուժեղ բոցավառվում է, իսկ արա հետ միասին վառվում է նաև յերկաթաղարը, յեթե նա բավական բարակ է: Յեղրակացութուն՝ թթվածնի մեջ այրվում է մինչև իսկ յերկաթաղարը:

14—15 ժամեր. Ածխաքքու գազի հատկությունները

Բաժակի մեջ դնել վրավիճի փոքր կտորներ և վրան լցնել թուղը քաջախ կամ յերկատկոսային աղաթթու, այնպես վոր թթվումը ծածկի վառվի կտորները: Ածխաթթու գազի պղղուղջակները դուրս են դալիս: Յեղրակացութուն՝ յեթե կալվի վրա լցնենք թթվում, այն ժամանակ ածխաթթու գազը պղղջակներով դուրս կգա:

Կալիճ և թթվում պարունակող բաժակի մեջ իջեցնում ենք փայտյա վառվող ձողիկը: Զողիկը հեղուկին չհասցրած հանդչում է: Յեղրակացութուն՝ ստացանք այնպիսի մի գազ, վորի մեջ վառվող ձողիկը վոչ միայն չի այրվում, այլ և հանդչում է: Դասատուն հայտնում է, վոր այդ գազը կոչվում է ածխաթթու գազ: Բաժակի մեջ հավաքած ածխաթթու գազը կարելի չէ ջրի նման բաժակից լցնել մի այլ անոթի մեջ: Յեղրակացութուն՝ ածխաթթու գազը ողից ծանր է: Վերցնենք վառվող մոմ և նրա վրա լցնենք բաժակում յեղած ածխաթթու գազը. — մոմը հանդչում է: Վերցնենք կրաջուր (դեղատներում վաճառվում է), լցնենք այն բաժակի մեջ, վորտեղ վրա ածխաթթու գազ: Կրաջուրը փոխում է իր գույնը՝ նա թափանցիկից դառնում է պղտոր:

Յեղրակացութուն՝ ածխաթթու գազից վրաջուրը պղտորվում է: Վերցնում ենք մի բաժակ, վորի մեջ լցնում ենք մի փոքր կրաջուր և ապակյա ձողի միջոցով յերեսաները արտաշնում են կրաջրի մեջ: Կրաջուրը պղտորվում է: Յեղրակացութուն՝

մենք արտաշնում ենք ածխաթթու գազ: Այս բոլորից հետո յերեսաներին հայտնում ենք, վոր ողը բացի իր գլխավոր բաղադրիչ մասերից՝ թթվածնից և բորականից, իր մեջ պարունակում է նաև քիչ քանակությամբ ածխաթթու գազ: Տանը սովորելու և կրկնելու համար դասատուն հանձնարարում է տեսրով և դասադրքով կրկնել ողի մասին անցած ամբողջ նյութը:

16-րդ ժամ.

Զրույց և ստուգողական աշխատանք մոտավորապես հետևյալ հարցերի շուրջը:

1. Ինչպե՞ս ապացուցել ողի ներկայութունը:

2. Ինչի՞ց է առաջանում քամին:

3. Ինչպե՞ս ապացուցել, վոր ողը ջերմության վառ հաղորդիչ է:

4. Ի՞նչ գլխավոր մասերից է բաղկացած ողը:

5. Ի՞նչ տարբերութուն կա թթվածնի և ածխաթթու գազի միջև:

Ծանոթություն. Քաղաքի դպրոցներին այս թեմայի համար հատկացված է 10 ժամ. կրճատում կարելի չէ կատարել այնպես՝

ա) առաջին և յերկրորդ ժամերի նյութերն անցնել մի դասում:

բ) յերրորդ և չորրորդ ժամերի նյութերը միացնել՝ փորձերի մի մասն առաջարկելով յերեսաներին կատարել տանը և արդյունքների մասին հայտնել հետևյալ դասին:

գ) 9-րդ և 10-րդ ժամի նյութերը միացնել և քիչ կրճատելով անցնել մի դասում:

դ) 11—15-րդ ժամերի նյութերը վորոշ կրճատումներով անցնել յերկու դասում:

ԶՐՈՒՅՑԻ ՆՅՈՒԹԵՐ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋԸ

3-ՐԴ ՔԱՌՐՈՐԴ

3-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Մարդու հիվանդությունները՝ վարակիչ և վոչ վարակիչ, դադարաբեր հիվանդություններ մասին (կենդանի եյակներ, վոչ յերեւում են վոչ հասարակ աչքով, այլ մանրադիտակով)։ Ի՞նչպես կարելի չէ վարակել շփումով (քոս), կերակրի միջոցով (վոչովախային տիֆ, խոլերա, լուծ), արտաշնչած ողի միջոցով (թոքախտ), մանրեներմ արյան մեջ թափանցելու հետևանքով (մալարիա, բժաժուր տիֆ)։ Կրոնական ծեսերի վնասակարությունը (հաղորդություն, պատկերներ, խաչեր համբուրել և այլն)։

ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹԸ

3-ՐԴ ՔԱՌՐՈՐԴ

3-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Գարնանը սերմացուները դասարանում ծղեցնելը, հողի մեջ փոխադրելը և նրանց հետագա խնամքը։ Վարունդի (ձվի կեղեվում, թղթյա բաժաններում, ձիմի մեջ), չաղգամի, պամիդուրի սածիլների աճեցում՝ դասարանում։ Սածիլների չիթիլում։ Կաղամբի սածիլների աճեցումը ջերմոցի մարզերում։

4-ՐԴ ՔԱՌՐՈՐԴ

3-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ (Քաղաքի դպրոցներում 10 ժամ, գյուղական դպրոցներում 16 ժամ)

ԵԼԵՔՏՐԱԿԱՆ ՅԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1-ին ժամ—Յերեխաների պատմվածքները ամպրոպի, կայծակի և վոչուտի մասին։

2-րդ ժամ—Դասադրեից վարդալ ամպրոպի և շանթարգելի մասին։

3-րդ և 4-րդ ժամեր—Երեքտրական կայծ ստանալը չիման միջոցով։ Մաքուր լվացված և չոր մազերը դուտապերչե սանրով սանրելիս լսվում են թույլ յուրահատուկ ձթթոց, իսկ

մթության մեջ յերեւում են կայծեր։ Յեթե հոլանդական վոչ շատ տարվառանի հաղձադյուտի վրա դնենք լրադիրը և նրան մի առ ժամանակ չիենք շորի խողանակով, կնկատենք, վոչ լրադիրը կսլուծվի և հաղձադյուտին։ Վառարանից լրադիրը պոկելու ժամանակ լսվում է ձթոց, իսկ մթության մեջ յերեւում են կայծեր։ (Փորձերը ցանկալի չէ, վոչ կատարվեն դասարանում։ Անկարելիության դեպքում վորձերը տալ տանը կատարեն։

լու հետեյալ դատին արդյունքները հայտնելու պայմանով)։

Յեղրակացություն. վոչուտ տեսակի սառկաների միմյանց չիմալից ստացվում է երեքտրական կայծ։ Կայծակը հակա երեքտրական կայծ է։ 5-րդ ժամ—Ամպրոպի, կայծակի և վոչուտի հետ վրադված կրոնական նախապաշարումների անհեթեթությունը։

6-7-րդ ժամեր—Երեքտրականության նշանակությունը ԽՍՀՄ-ի տրանսպորտի մեջ՝ դասատույի պատմվածքը և ընթերցում դասադրեից։

8-12-րդ ժամեր—Ամպրոջ տարված անցած նյութի կրկնություն։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՄԱՌՎԱ ՀԱՄԱՐ

Յերեխաների ամառային աշխատանքներն ավելի հետաքրքիր դարձնելու համար անհրաժեշտ է՝

13-րդ ժամ—Յույց տալ հողերի հավաքածու պատրաստելու ձևը։

14-րդ ժամ—Տանել երակուրիա ողտակար հանածոներ հավաքելու և նրանցից հավաքածու պատրաստելու ձևերը ցույց տալու նպատակով։

15-րդ ժամ—Յույց տալ ախալխի հերբարիում պատրաստելու ձևը, վոչ կալտիկների բույսի դարգացումը սերմից (վոչուչ բույսի վրա. որինակ՝ լոբի, սխեռ, վոսպ) մինչև կրկին սերմը։

16-րդ ժամ—Երակուրիա կենդանիներ ուսումնասիրելու նպատակով։ Նախորոք պատրաստել պարզ հարցաթերթիկ (արտաքին տեսքը և մեծությունը, բնակավայրը, կերակուրը, սովորությունները, ոգտակարությունը կամ վնասակարությունը)։

Ծանոթություն. — Քաղաքի դպրոցների ժամերի կրաճտումը կարելի չէ կատարել ամառային աշխատանքների ժամերից և «Երեքտրականությունը բնության մեջ» թեմայի առաջին և յերկրորդ ժամերի միացումից։

ԶՐՈՒՅՑԻ ՆՅՈՒԹ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Ճանճերը, մոծակները և վոչիլները, վոչուտ վարակ տարածողներ. պալլարի միջոցները նրանց դեմ։ Ամառային աշխատանքի կազմակերպումը. կազմակերպված բացությա աշխատանք, կանոնավոր սնունդ և լուծ։ Ֆիզկուլուրա, սպորտ խաղեր։ Որդանիլմը ամբապնդելու կանոններ։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Սածիլների տեղափոխությունը մարզեր և խնամքը։ Հատապտուղների խնամքը (քաղհան, փխրացում, և այլն)։ Գարնանացանը (հացահատիկներ և տեխնիկական կուլտուրաներ) կոլեկցիոն հոդամասերում։

Ծանոթություն. — «Ձրույցի նյութ առողջապահական հարցերի մասին» և «Գյուղատնտեսական նյութեր» թեմաների համար առանձին ժամեր չի նախատեսվում, այն պետք է անցնել համապատասխան համար մոմենտներին խմբակային աշխատանքների կարգով և այլն։

Բ Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

4-րդ ԴԱՍԱՐԱՆ

(Յերրորդ քառորդի ծրագրային նյութի պլանավորումն ու մեքոդական մշակումը)

(Քաղաքի դպրոցներում՝ 20 ժամ, գյուղական դպրոցներում՝ 25 ժամ):

ՄԱՐՍՈՂՈՒԹՅՈՒՆ

1-ին և 2-րդ ժամեր—Մարտողության անհրաժեշտությունը մարմնի աճման և աշխատանքի ենթարկելի համար: Կերակրի մանրացումը բերանում, նրա փոխոխումը ստամոքսում և կերակրի ներծծումը աղիքների մեջ կոչվում է մարտողություն: Նկարների կամ քանդակի բնիքների նրանց նշանակությունը (կերակուրը վրա ծանոթացնել յերեխաներին մարտողական գործարանների տեղը և ներս ընդունելը, նրան մարսելը, մարտողության հետևանքով ստացած սննդարար հյութերի ներծծումը, վերակերի ախտահանում): Մարտողական գործարանների պահպանման անհրաժեշտությունը—աշխինքն չծանրաբեռնել, չհոգնեցնել նրան չափազանց շատ կերակուր ընդունելով:

3—4-րդ ժամեր—Կերակրի կալմոթյունը (սպիտակուցներ, ճարպեր, ածխաջրածիններ): Զրույցի ընթացքում պարզվում է առողջապահական հիմնական մոմենտների բերանի խոռոչի, ստամոքսի (արդյոք բոլոր ատամները միատեսակ են կառուցված, առաջնային և հետին ատամների աշխատանքը, խմանալ ատամների թիվը և կատարել ատամների պահպանման կանոնները) ընթերցում դասադրելի կամ այլ գրքերից հետևյալի մասին: Խնչպես մարդիկ խմացան, թե ի՞նչ է կատարվում ստամոքսում: «Խնչպես պետք է սրնփել»: «Առողջ սնման կանոնները»:

5-րդ ժամ—Կերակրի առողջապա-

հությունը (մաքուր պահելը): Զրույց և ընթերցում հետևյալ հոդվածների «Սենյակի ճանճ», «Խնչպես է մարդը կուլում միկրոբների դեմ»:

6-րդ ժամ—Մարտողությունը նյութի կրկնություն:

7—11 ժամեր—Շնչառություն:

Զրույց «Խնչո՞ւ յենք մենք շնչում» նյութի մասին: Հոդվածի ընթերցում: Գաղափար թոքերի կառուցվածքի մասին: Համապատասխան մոդելի և նկարի դիտում: Հոթի, ճաղարի կամ այլ մորթած կենդանու թոքերի դիտումը «ող լցնելու և հեղձելու միջոցով»—աշխատելով պարզել ուղի անցած ճանապարհը մինչև թոքերի ներսը: Դասարանում դիտել յերեխաներին շնչառությունը: Խնչո՞ւ ներշնչման ժամանակ ողը մտնում է թոքերի մեջ, իսկ արտաշնչման ժամանակ դուրս գալիս: Կրճաթանոթների կողոսկորների մասնակցությունը ներշնչման և արտաշնչման ժամանակ, լավ դարձացած կրճաթին մեկանների նշանակությունը: Կրճքի ծախսի չափումը ներշնչման և արտաշնչման ժամանակ: Արտաշնչած ողը անցկացնել կրճքի միջով:

Յեղրակացություններ:

12—3-րդ ժամեր—«Շնչի՞ր թարմ և մաքուր ող» հոդվածի ընթերցումը: Զրույց թոքախտի և նրա տարածման միջոցների մասին: Զրույցի ժամանակ ցուցադրել համապատասխան նկարներ: Թոքախտից պաշտ-

պանվելու գլխավոր միջոցները: Ծխելը և նրա վնասը: Գաղափար թունավոր դոզերի և հակադոզի մասին: Խնչպես են ազդում թունավոր դոզերը մարդու և կենդանիների որդանիքի վրա: Կանաչադարձման առողջապահական նշանակությունը (ածխաթթու դոզի ներս ընդունելը և թթվածնի արտադրումը):

14-րդ ժամ—Շնչառությունը նյութի կրկնություն:

15—19-րդ ժամեր—Արյան շրջաճառություն:

Արյան, սրտի և արյունատար անոթների նշանակությունը (սննդանյութերի՝ թթվածնի տարածումը մարմնի մեջ արյան միջոցով):

Զրույց և ընթերցում: Կարելի չէ ընթերցել «սրտի աշխատանքը» հոդվածը:

Ցույց տալ ճաղարի սիրտը (խալ յեթև հնարավոր է ցույց տալ նաև փոխարի կամ հորթի սիրտը): Սրտի և արյունատար անոթների մոդելը և նկարի դիտումը: Ցուցադրման կարգով դիտել կենդանու (ճաղարի) արյունը: Դասատուն նախորդ պետք է արվում լցնել բաժակի մեջ և յերբ նա մակարդվի, այն ժամանակ փորձի նրան թափել: Արյան մակարդը մոտ մի ժամ թափել բաժակի մեջ և հետևել նրա վրա առաջացող վարդադույն հեղուկի առաջադանը—(արյան շրջան): Արյան մակարդը լավ

լվանալ՝ ջրի մեջ և առաջարկել յերեխաներին դիտել այն: Արյան մակարդվելու նշանակությունը վերքերի ժամանակ:

20-րդ ժամ—Անցած նյութի կրկնությունը և զրույց այն մասին, թե ինչպես պետք է աշխատել, վարդապի սիրտը չհոգնի: Ֆուտբոլի և ուժեղ յերկարատև վաղի վնասը յերեխաների և դեռահասների համար: «Առաջին աշխատություն կարվածքի և արյունահոսություն ժամանակ» հոդվածի ընթերցումը:

21—24-րդ ժամեր — Արտաքրուրյան որգաններ (մաշկ և յերկկամներ):

Զրույց այն մասին, թե ինչպես են մեք մաքմնից հեռանում վնասակար, անպետք նյութերը: Քրտնաղեղձեր: Զրույց դիտումը: Քրտնաղեղձերը: Զրույց մաքմնի մաքուր պահելու և առողջապահական կանոնների մասին: Մեղի արտաթորումը (յերկկամներ և միզապարկ): Յերկկամների և միզապարկի դիտումը մոդելի, բնիքների կամ նկարի վրա: Իմանալ նրանց դիրքը մարմնի մեջ և կազմությունը: Նկարել և համապատասխան գրել նկարի բովանդակությունը:

25-րդ ժամ — Արտաքրուրյան նյութի կրկնություն:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹԸ

3-րդ ԲԱՌՈՐԴ

4-րդ ԴԱՍԱՐԱՆ

Գարնանը: Ճաղարների, հալերի, ճուտերի խնամքը: Եթե կուրսիս դեպի ինկուբատորում:

Ծանոթություն. 1. «Գ» և «Դ» դասարաններում գյուղատնտեսական նյութը մշակվում է խմբակային աշխատանքի կարգով:

2. Գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու համար յուրաքանչյուր դպրոց պետք է ունենա իր կենդանի անկյունը դռն գյուղատնտեսական շատ փոքր հողամաս:

Ծանոթություն. Անցնելիք թեմաների հետ կապված դաստիարակչական աշխատանքների և հատկապես հավանորոնական դաստիարակություն յանդիմանելի վրա անհրաժեշտ խորությունը կանչելի առնված, նկատի ունենալով, փոր սրտ հետ միասին սպաղըրվում և հատկապես այդ յանդիմանելին նվիրված, ուսուցանելից թարգմանած «Դաստիարակչական աշխատանքը բնադիտություն յատերի և արտադասարանական պարարտ ունեցելի ընթացքում» մեթոդական նամակը:

4-րդ ԴԱՍԱՐԱՆ

(Քաղաքի դպրոցներում 20 ժամ):
(Գյուղական դպրոցներում 25 ժամ):

ՄԱՐԴՈՒ ՄԱՐՄԵՆԻ ԿԱՌՈՒՅՎԱԾ-
ՔՐԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ

1—8-րդ ժամեր. Ուղեղ և նյարդեր.

Զրույց մեր շարժումների բնույթի մասին: Ծանոթացում դիտակցական և անդիտակցական շարժումների հետ, նրանց առաջացնող պատճառների կապակցությունը: Ռեֆլեկտոր (անդիտակից) շարժումների դիտումը: Դիտել վտանգի շարժումը ծնկոսների տակ խիկելու ժամանակ: Բրեյ լայնանալը միջուկյան մեջ և նեղանալը ուժեղ լույսի մեջ (հարկավոր և փոքրիկ հայելի), աչքը փակելը և թերթելը չափազանց ուժեղ լույսի ժամանակ, վտանգ ըստ պատճառի շարժման ներկայությունը ժամանակ և այլն: Նյարդերի նշանակությունը: Համապատասխան հոդվածների ընթերցում դասադրվից:

Մարդու նյարդային սխեման դիտումը (զլիտեղեղ, վոլյուտեղ և սրբանցից դուրս յեկող նյարդերը): Ծանոթացում վոլյուտեղի հետ:

«Վոլյուտեղը և նրա գործունեությունը» հոդվածի ընթերցում և զրույց: Ծանոթացում գլխուղեղի հետ: «Ուղեղ և նյարդեր» հոդվածի ընթերցումը: Մոդելի, նկարի կամ սխեմայի նկարված գլխուղեղի կիսագնդերի դիտումը: Զրույց մարդու և այլ կենդանիների ուղեղի բաշի, չափի և կառուցման բնույթի (ծաղիկները) մասին: Ուղեղի նեկարների դիտումը որան-գուտանի և մարդու ուղեղ:

Նյարդերի և ուղեղի առողջապահությունը (յերկու դասից վոչ պահա): Զրույցը պետք է ընթանա մատչելի հոդվածներ կարգավիճակ և պատմվածքներով մտափոր աշխատանքի առողջապահության մասին, մտափոր հոգնածությունը կանխելու միջոցների մասին, հետաքրքիր աշխատանքի նշանակությունը մասին, որպես հանդատի և ուժեղի մասին,

ծիախոտի և ալկոհոլի նյարդային սխեմանի վրա թողած վատ ազդեցությունը մասին: Գրանցել նյարդային սխեմանի պահպանման առողջապահական կանոնները:

9-րդ ժամ—Զգայարանների դերը, նրանց կապը ուղեղի հետ: Լրույց և ընթերցում (ոգտադործելով նախորդ դասերին մշակած նյութը):

10—12 ժամեր.—Լսողություն: Ականջի կազմությունը դիտել ականջի կառվածքի մոդելը, նկարը: Ընթերցել հոդվածներ: Ականջի առողջապահությունը (ականջը մաքրել միայն արտաքին յեղրում և այն ել բուլթ հարմարանքով: Ավելի լավ է մաքրել մաքուր թաշկինակով ծածկված ճկույթով, ականջափոնքի լվացումը և այլն): Սաղեր վորքան հեռվից եմ յես լսում և այլ թեմաներով:

13—15 ժամեր.—Տեսողություն: Աչքի կառուցվածքի սխեման՝ մոդելի կամ նկարի վրա: Տեսողության նշանակությունը (զրույց): Սաղեր կաթմակերպել հարց դնելով, վորքան հեռու յեմ յես տեսում, տարբերում եմ գույները, կարողանում եմ վորոշել տարածությունը և շարժությունը: Անհատական տեսողությունը վորոշել հատուկ աղյուսակով: Հոդվածների ընթերցումը: Աչքի առողջապահությունը լույսի բնույթի նշանակությունը, աչքի վարակիչ հիվանդություններ (տրախոմա), աչքի կեղտոտվելը, արցունքի դերը և լվացումները, նախարդուշական միջոցներ աչքի հիվանդության ժամանակ, գլխավորապես վարակիչ հիվանդությունների դեպքում և այլն: Արցունքաբեր դեղեր:

16—21-րդ դաս.—«Մարդու և կենդանիների մարմնի կառուցվածքի նմանությունը»: Զրույց և հոդվածների ընթերցում: Մարդու կենդանական ծագումը: Մարդու արարչագործությունը մասին յեղած կրոնական ուսմունքի անհեթեթության մերկացումը (տարրական, ըմբռնելի կերպով):

Նախորդ դասերի ժամանակ ուսումնասիրված փաստերի վերլուծումը և սրա հետ կապակցված նյութի համառոտ ընդհանուր ամփոփումը: Մարդու տարրերությունը կենդանիներից: Մարդու կառուցվածքի առանձնահատկությունները՝ մարմնի ուղղաձիգ դիրքը, առջևի վերջավորությունների աղաատալումը քայլվածքին ծառայելուց և այլ վերջավորություններով աշխատելու հնարավորությունը ստանալը, ափի վարդապաճ ուղեղ: Մարդու հիմնական տարբերությունները կենդանիներից՝ աշխատանք և դործիքներ պատրաստելու կարողություն: Համապատասխան հոդվածների ընթերցում:

Զրույց դասատույի կողմից. ճիշտ և մատչելի կերպով ձևակերպված յեղրակազմությունների զրանցում:

22—25-րդ ժամեր.—Կրկնություն: ամբողջ տարվա անցած նյութերի: Յեթե հնարավոր է՝ մարդու մարմնի կառուցվածքը և նրա աշխատանքը նյութը ամփոփելու և դիտումներ կատարելու համար յերեխաներին պետք է տանել եքսկուրսիա թանգարան: (Եքսկուրսիայի վարման եռտարները՝ նախնական զրույց և մրշակիով նյութին վերաբերվող հարցերի թուղիկ ակնարկ, դասատույի կամ բժշկի դեկավարությամբ եքրպոնատների ուսումնասիրումը, ամ-

փոփման զրույց դասարանում): Քաղաքի դպրոցներում այս թեմային հատկացված է 20 ժամ, կրճատումը կարելի յե կատարել հետևյալ ձևով:

- 1). Ուղեղ և նյարդեր նյութն անցնել 7 դասում:
 - 2). Լսողության նյութն անցնել 2 դասում:
 - 3). Տեսողության նյութն անցնել 3 դասում:
 - 4). Մարդու և կենդանիների մարմնի կառուցվածքի նմանությունը նյութն անցնել 5 դասում:
- ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՍԵՍՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԸ

Գարնան աշխատանքն ալում: Ծանոթութուն.— Գյուղատնտեսական աշխատանքները կատարելու համար յուրաքանչյուր դպրոց պետք է ունենա իր կենդան անկյունը և դոնե մշակման համար հարմար մի շատ փոքր հողամաս:

Ծանոթութուն.— Գյուղատնտեսական արտադրության և առողջապահության վերաբերյալ նյութը միացված է «Մարդու մարմնի կառուցվածքը և աշխատանքը» թեմային: Առողջապահական ունակությունները դարգացնելու ամենորյա աշխատանքը շարունակվում է ամբողջ տարին:

ԱՅԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

Աշխարհագրութեան դասերը հնարավորութեամբ են տալիս ծավալել գաստիարակչական մեծ աշխատանք։

Ինքնըստինքյան հասկանալի չէ, վոր յուրաքանչյուր գաստիարակչական աշխատանք, այդ թվում և աշխարհագրութեան դասերին տարած աշխատանքը, միայն այն ժամանակ կրող շոշափելի արդյունք, յերբ ուսուցիչը նախորդ կղնի իր առաջ խտորեն սահմանադրված խնդիրներ և մեծ համառութեամբ միջոցներ ձեռք կառնի այդ հարցերի լուծման համար։

Դասատուն պետք է մանրադնին կերպով ուսումնասիրի աշխարհագրութեան ծրագիրը գաստիարակչական այն բոլոր հնարավորութեանն ի տեսակետից, վոր այդ առարկան բնականում է։

Այդ ուսումնասիրութեան ժամանակ դժվար չէ համոզվել, վոր աշխարհագրական նշութի բնույթը հրնարավորութեան և տալիս գաստիարակչու մարտնչող անաստվածներ, Լենինյան-Ստալինյան ազգային քաղաքականութեան հրաշունչ ջատագովներ, սոցիալիստական շինարարութեան անձնավեր մասնակիցներ, սոցիալիստական հայրենիքի ջերմեռանդ հայրենասերներ։ Հենց այս ցույց տված գաստիարակչական խնդիրների վրա չէ, վոր ուսուցիչն առաջին հերթին պետք է կենտրոնացնի իր ուշադրութեամբ։

Մակայն ուսուցիչը պետք է քննարկի, վոր գաստիարակչական աշխատանքներն կոնկրետ խնդիրները լուծելիս չպետք է սահմանափակվել ծրագրի և դասագրքի շրջանակներով։ Յերկրի ընթացիկ քաղաքական կյանքն

ընդ անկախած ուսուցչի առաջ միշտ նոր և նոր կենսական ու հրատարակ հարցեր է դնում։ Այսպես. աշխարհագրութեան դասերն այն ժամանակ, յերբ 37-38 ուս. տարում 4-րդ դասարանում անցնում ենք «ԽՍՀՄ-ի բեկեռային գոտին» թեման գլալի կերպով պետք է տարբերվեն 36-37 ուս. տարվա նույն թեմայի անցման ձևերից, նկատի ունենալով Սորհրդդային ասիացիայի կողմից 1937 թ. ամռանը Հյուսիսային բեկեռը նվաճելու փաստը (հերոս Պապանինականները)։

Ուսուցիչը պետք է հրաշալի կերպով ծանոթ լինի կուսակցութեան և կառավարութեան վերջումներին։ Նա պետք է պարբերաբար լրացրեր կարգա և ոգտվի բնորված և սխտեմադրացիայի յենթարկած լրագրային նշութերով իր ուսումնաստիարակչական ախատանքների ընթացքում։

Ամենից առաջ աշխարհագրութեան ուսումնասիրութեան ժամանակ անհրաժեշտ է վորքան հնարավոր է հաճախակի կերպով ցույց տալ, վոր յերկրագնդի մակերեսի վրա տեղի ունեցող յեղութները պատահական չեն, այլ փոխադարձաբար կապված են և պայմանավորված։

Ինչո՞ւ վորոշ տեղերում ձորեր են առաջանում, իսկ այլ վայրերում վոչ։ Ինչո՞ւ բննային փետերն արագ են հոսում, իսկ հարթութեանների դեռերը՝ դանդաղ։ Ինչո՞ւ Հյուսիսային Սառուցյալ ուղիկանոսում ապրող գաղաններն իրենց մաշկի տակ ճարպի հաստ չերտ ունեն։ Ինչո՞ւ տունդրաներում շատ լճեր ու ճահճներ կան։ Ինչո՞ւ տունդրաներում չեն ա-

ծում խոշոր ծառեր։ Ինչո՞ւ տունդրաների թղուկ հաստաբուն ծառերը շատ հաճախ սողում են դեռնի յերեսին։ Ինչո՞ւ տունդրաների կենդանիները ձմռանը ապիտակ դույնով են դուռնափորում։ Ինչո՞ւ անտառային դոտում, նրա հյուսիսային մասում, աճում են միայն փշտերով և մանրատերեխ ծառեր։ Ինչո՞ւ հարավ շարժվելով այդ ծառատեսակներին խտնվում են և լայնատերե տեսակներ։ Ինչո՞ւ տալգայի գաղանները խոխ և փափուկ բուրդ ունեն։ Ինչո՞ւ տափաստաններն անտառադուրի են։ Ինչո՞ւ չոր տափաստաններում խտտաբույսերը համատարած կանաչով չեն ծածկում գետինը։

Աշխարհագրութեան դասերին մատչելի ձևով տառնալի և հարցուրարուման հարցերի ճիշտ բացատրութեանը յերկնային գիտկցութեան մեջ գիտական աշխարհայացքի հաստատուն հիմքերի կղնի և դրանով հենց հնարավորութեան կտա հետագայում պարզաբանելու կրոնական բացատրութեանների կեղծութեանն ու հակադիտական լինելը։

Վոչ պակաս կարևոր է յուրաքանչյուր հարմար դեպքում ընդգծելու մեջ շրջապատող աշխարհում տեղի ունեցող փոփոխութեանները։ Որքանակ՝ դարնանը ձյան արագ հալումից կամ ամառային հեղեղներից հետո, գետնի յերեսին առաջանում են վոչ շատ մեծ ջրափոսեր ու քերվածքներ, այդ քերվածքները հետզհետե դառնում են ճուղավորված հակա ձորեր։

Գետը քայքայում է մեկ ափը և իր հետ բերած տիղմը դաստիարում է մյուս ափին։ Գետաբերանում առաջանում են նոր ծանծաղուտներ ու կղզիներ։ Զրափարարման ժամանակ գետերը մեկ այտեղ, մեկ այնտեղ փոխում են իրենց հունը։ Լճերը խտաղկալում են իրենց ափերից և հետըզհետե դառնում են ճահճներ։ Մովն իր տեղը գիջում է ցամաքին (ԽՍՀՄ-ի չոր տափաստանների և անապատների դոտի)։

Յերկրի մակերևութի փոփոխութեան դործում առանձնապես մեծ դերը պատկանում է մարդուն։ Նա

շորացնում է հայրուր հաղարսվոր հեկտար ճահճներ և նրանց տեղը դցում է իր գաղաներն ու բանջարանոցներ։ Նա անտառահատում է հրա կախալան տարածութեաններ և անտառացիների լայնածախալ անտառագործի վայրեր։ Նա վարում է հողը և դրանով վոջնացնում խոտան տափաստանները։ Նա ամբարտակներ է կառուցում և առաջացնում է հսկայական արհեստական ջրամբարներ։ Նա գետերն ու ծովերը միացնում է ջրանցքներով և քաղ է անում նոր ջրային ճանապարհներ։ Ինքնատիքը յան հաղանալի չէ, վոր կապիտալիստական կարգերում մարդու ներգործութեանը բնութեան վրա ծառայում է շահագործող գասակարգերի ոգտին։ Այդ ներգործութեանը վերցրած ամբողջ յերկրի մասշտաբով անպրնային է և գիշտիչ։ Գետերի վերին հոսանքների մոտերքում գտնված անտառների վոջնացումը ցարական Ռուսաստանում լուրջ կերպով խախտեց այդ գետերի ուժիղը, (վորը ուժիղ կերպով արտահայտվում է գետերի գաղանային ջրափարարումով և ամռան ծանծաղումով)։ Խոպան տափաստանների վարումը մեծ թեքութեանների յնչպես և բլուրների ու բարձրութեանների յանջերի վրա առանց նախադուշական միջոցներ ձեռք առնելու, պայմաններ ստեղծեց սևահողային շերտում հրակախակի ձորերի առաջացման, ձորեր, վորոնք «յերաշոր բարեկամներն են» և հողագործութեան վտանգավոր թշնամիները։

Տնտեսութեան սոցիալիստական սխտեմի ժամանակ մարդու ներգործութեանը բնութեան վրա բացմապատիկ անկամ ուժեղանում է և իր ուղղվածութեամբ սկզբունքային կերպով տարբեր բովանդակութեան և ստանում։ Այդ ներգործութեանը կատարվում է ընդհանուր պլանով (հնգամյակների պլանի համաձայն), կոլեկտիվ ուժերով և վողջ աշխատավորութեան շահերը նկատի ունենալով։ Անտառամշակման սոցիոնալիզացիայի հետ մեկտեղ միջոցներ են ձեռք առնվում նախադնացութեանը

բարեխախտութեամբ զեւերի հունք մաքրելու, ամբարտաճեւեր և շէշտեւեր կառուցելու միջոցով: Տափաստանները վարելու հետ մեկտեղ կենսագործման ևն ձորերն ամբար- նելու միջոցառումները և հենց այդ ձորերը դարձնում են բնակչութեան համար ոգտակար ջրամբարներ:

Բոլոր այս որինակները հանդե- նում են յերեւոյթին աշէ մաքրել, վոր յերկրի մակերևութի վրա առաջ են դաշխ յանգաֆտները ձեւափոխող անվերջ կրկնվող փոփոխութիւններ և այդ փոփոխութիւնները կատար- ւում են գիտութեանը հայտնի բնա- կան ֆակտորների ներգործութեամբ, և ե՛լ ավելի մեծ չափերով՝ տնտե- սութեանը ղեկավարող մարդու ներ- գործութեամբ: Մինչդեռ կրօնը փոր- ձում է գործը ներկայացնել այն- պէս, վոր աշխարհը ստեղծել է աստ- ված և իր ստեղծման որից նա քա- րացել է (յեթե կրօնն յնդուներ բը- նութեան փոփոխականութիւնն այն ժամանակ առ վոչինչ համարված կը- լինէր արարչի գերը):

Հակակրօնական բացատրական աշ- խատանքների համար առանձնապէս չնորձակալ նյութ են տալիս 3-րդ դասարանի աշխարհագրութեան հե- տեյալ թեմաները. — «Յերկրա- դունդ», «Յեղանակ և կլիմա»:

Յերեւաններն իրենք յերկար ամիս- ների ընթացքում դիտում են բնու- թիւները և հայտնաբերում կախվա- ծութեան պարզագոյն որինակներ. որինակ՝ 1) տեղումները մեծ չափե- րով լինում են արեւմտյան կամ հա- րավ արեւմտյան քամիների ժամա- նակ, 2) յեթե ձմռանը յերկինքը պարզում է, ապա սառնամանիքն ու- ժեղանում է, 3) յեթե ձմռանը յեր- կինքը ծածկվում է ամպերով և ձյուն է դալիս, ապա սառնամանիքը պետք է թուլանա և այլն: Ուսուցիչը հաղորդում է յրացուցիչ մի քանի գիտական նշաններ յեղանակի մա- սին. բացատրում է ինչպէս ոգտվել ծանրաչափից — բարոմետրից (չբա- ցատրելով նրա կազմութիւնը). պատմում է, թե ինչպէս են կազմա- կերպված բնութեան գիտական նա- խաեսման աշխատանքները, պարե-

բարբար գիտություն յունեներ, վո- բանց մասին մենք խմանում ենք յրազրերից կամ ուղիտյի միջո- ցով. առանձնապէս ընդգծում է, թե ինչ կոնկրետ ոգտւմներ են տալիս այդ գիտական նախաեսմանները: Վերջում, գեղարվեստական գրվածք- ների նյութի հիման վրա (Տոլստոյ — «Ամպրոպ», Դեմյան Բեզնիյ — «Տեր- աբն ու ծանրաշափը» և այլն), կամ տեղական կոնկրետ փաստերի հիման վրա ուսուցիչը մերկացնում է տեր- տերական խաբերալութիւնները, հակադիտական լինելը և առհասա- րակ կրօնական սեահափառութիւն- ների փառաբանութիւնը:

«Յերկրադունդ» թեման անցնելիս ուսուցիչը հանրամատչելի և գրավիչ կերպով նկարագրում է, թե ինչ կարծիք և պատկերացում ունենին յերկրի ձևի և նրա զիրքի մասին տիեզերքում՝ հին և միջին դարերում ապրողները: Ապա ուսուցիչը պատ- մում է, թե ինչպէս այդ առաջին միամիտ պատկերացումներն ու կար- ծիքները տեղ գտան, այսպէս ասած, «աստվածահայտնութեան» և «սրբ- բաղան» գրքերում, թե ինչպէս հե- տադաշում գիտութիւնը հերքեց այդ միամիտ պատկերացումներն ու կարծիքները և ցույց տվեց, վոր յերկրը գունդ է ու շարժվում է իր առանցքի և արեգակի շուրջը: Ու- սուցիչը բացատրում է, վոր յեկեղե- ցին բացառիկ կերպով ծանր դրու- թեան մեջ էր դրել գիտութեան դար- դացումը (աստված «ստեղծել» և աշխարհը, բայց յեթե դատենք այդ աստվածահայտնութեան և սրբազան գրքերով, նա չգիտէ, թե ինչպէս է կազմված այդ աշխարհը): Վերջա- պէս ուսուցիչը պատմվածքներ է կարդում դասարանում այն մասին, թե ինչպիսի կատաղութեամբ յեկե- դեցակապները դիմադրում էին դի- տութեան հաղթական առաջնադա- մանը և թե ինչպէս փորձում էին նրանք ափնադաժան հետապնդում- ներով վախեցնել գիտականներին (Բրունո, Գալիլեյ):

4-րդ դասարանում բնական գոտի- ներն անցնելիս պետք է պարզաբա- նել, թե ինչպէս կրօնի սպասաւորնե-

րը, անկախ նրանից, թե վոր կրօնին էլին պատկանում (չամաններ, տեր- տերներ, մորաներ և այլն), անդա- վաճան կերպով շահագործում էին աշխատաւորութեանը և միաւորվում այլ շահագործողների հետ:

Այս յերկար բացատրական աշխա- տանքի հետեանքով յերեւանները պետք է պարզ կերպով պատկերաց- նեն կրօնական ուսմունքների կեղծու- թիւնն ու հակադիտական լինելը:

3-րդ դասարանի «Բնութեան և բը- նակցութեան կյանքի պատկերները յերկրադունդի սարբեր գոտիներում» թեման հնարավորութեան է տալիս ցույց տալու, թե ինչպէս դաժան կերպով շահագործվում են ժողո- վուրդները գաղութներում իրենց բա- տրեկացնողների կողմից: Տաժանա- կիւր և յերկարատե, յուսարացից- յուսարաց տեղ աշխատանքը և խրդ- ծուկ մուգացկանային գոյակերպը դուգակցվում է այնտեղ բացարձակ իբաւկաղրկութեան հետ: «Բարձր» ստասյի ներկայացուցիչը կարող է դաժան վերաբով ծեծել կամ նույնիսկ ոգանել «բնիկներին» իր այդ վոճ- բացործութեան համար փոչ մի պա- տասնանաւութիւն չկրելով: Զար- մանալի չէ, վոր 20-րդ դարում — գիտութեան և տեխնիկայի բարձր աստիճանի հասած այդ դարում — ճեղքված ժողովուրդները հենց իրենց ճեղքվածութեան հետեանքով հաճախ դաժանում են կուրտուրական ամենու- ցածր մաշարգակի վրա: Բարձրագոյն ստրկացած ժողովուրդները փոչնա- նում են:

Ոգտվելով լրազրային նյութերից, ուսուցիչը ցույց է տալիս, թե ինչ- պէս կապիտալիստական յերկրների ազա՛ ու արշունարբու բուրժուա- ցիան ձգտում է նորանոր ստրկա- ցումների և թե ինչպէս այդ ճանա- պարհին նա կանգ չի առնում և վոչ մի գաղանութեան առաջ (խաղաղան հափշտակիչները Հարեչստանում, Փաշիստական ինտերվենտներն Իս- պանիայում, ճապոնական մերկապա- րանոց ուղղական փոճակը Չինաս- տանում):

Ուսուցիչը պատրաստում է յերե- խաների մեջ ջեյմ համակրանք գեպի

կապիտալիստական յերկրների ճընչ- ված ու ստրկացած ժողովուրդները և բուն տեղութեան գեպի նրանց շահագործողները:

Մեղադատելով 4-րդ դասարանի «ԵՄՀՄ-ի ժողովուրդների կյանքը» թեմային, ուսուցիչը, մի շարք կոնկ- րետ փաստերով ցույց է տալիս այն նմանութեամբ, վոր գոյութեան ու- նի կապիտալիստական աշխարհի գաղութային ժողովուրդների և ցա- րական Ռուսաստանի ժողովուրդների դրութեան միջև:

Ուսուցիչը միաժամանակ ցույց է տալիս, թե ինչպէս է փոխվել ՌՍՀ Միութեան ժողովուրդների կյանքը Հեղափոխութեան Սոցիալիստական Մեծ Հեղափոխութեան հետեանքով: Այդ- դային թեմանութիւնների փոխարեն այժմ մենք ունենք ժողովուրդների յեղբայրական միութեան, ստրկաց- ման փոխարեն՝ փոխադարձ ոգնու- թեան: Ենթադիմ Ռոսիային իշխա- նութեան՝ անսահման հոգատարու- թեան, փոխվում է նախկինում ճընչ- ված ժողովուրդների դարավոր կեն- տակերպը: Տայգայի թափառաշրջի ժողովուրդները (Եվեյներ), չոր տափաստանների քոչվորները (կալ- միկներ և դաղարներ) անցնում են նստակյաց կյանքի: Հեռավոր ծայ- րամասերի տնտեսութիւնը բարձրա- նում է նույն այն բարձր տեխնիկա- կան մակարդակին, ինչ վոր յերկրի կենտրոնում:

Տաճարայում, տայգայի խիտ ան- տառնելում, անապատների ավա- ղուտներում, բարձրաբերձ լեռների լանջերին առաջանում են արդյունա- րեւական հոր շինարարութիւններ: Սմեկուրեք կյանքը դառնում է ունե- վոր: Այսպէս կերպով դարգացող տը- րանագործն ե՛լ ավելի ամուր կեր- պով և կապում իրար հետ Ռոսիայու- յին Միութեան յեղբայրական ժողո- վուրդներին: Ամտոմորիներն ու սա- վառանկները թափանցում են ամեն տեղ: Վոչ մի տեղ չի թողնվում մո- տացված, աշխարհի արված, «արջա- յին» անկյուն:

Առատեւական չափերով տնտեսու- թեան արագ վերելքի հետ միասին ա- ճում է և ՌՍՀՄ-ի ժողովուրդների

կուրսուրան: Անցյալին են տրված վարչերին հետևյալ մնացորդները (արքան փրկե, կեղծ ստորկացում և այլն): Դպրոցներում սովորում են բոլոր յերեխաները: Մեծահասակներին մեծ մասը դպրոցների, դասընթացների և այլ ուսումնական հիմնարկների լայն ցանցի հետևանքով աշխատում է իր կրթական մակարդակի բարձրացման վրա: Ուսուցումը արտաբնական մայրենի լեզվով: Ընդամենը պետք է հիշել, վեր ցարական Ռուսաստանի ժողովուրդներից շատերը չունեցին իրենց գիրը, գրականությունը և ամբողջովին անգրագետ ելին: Հաղար և տասնյակ հազարները, նախկինում խտրված չահարած զուգ հյուսիսի և Արևելքի փոքրաքանակ ժողովուրդներից, այժմ ստանում են բարձրագույն կրթություն, և ահա հենց այդ ժողովուրդները, փորձեց ցարիզմի ժամանակ համարվում էին «վաղրեններ», առաջ են քաշում այժմ իրենց միջին հանձարեղ և բնութանի դյուղառետներ, ճարտարապետներ և գիտնականներ: Այսպես, խորտակվում է պրակտիկայում՝ Փաշխատական վաղրենի կեղծ թեորիան այն մասին, ըստ վերին, իբր թե ինտելեկտուալ տեսակետից գերազանցում են արիսակ ուստային պատկանող, ինչպես և կապիտալիստական յերկրներում իշխանության գլուխ կանգնած բուրժուազիայի ազդեցությունները:

Զարգանում է իՍՆՄ-ի ժողովուրդների ղեկավարները: Չկա մեկ հանրապետություն, փորտեղ չծաղկեր ազդային ղեկավարական դրականությունը: Ծագում և բազմապատկրվում են ազդային թատրոնները: Այդ թատրոնների ղեկավարական կոլեկտիվները կարճ ժամանակվա ընթացքում հասել են բարձր վարպետության և մեծ հաջողությամբ յերկրներ են ունենում Մոսկվայում յերկրի կենտրոններում և արտասահմանում:

ԻՍՆՄ-ում ապրող բոլոր ժողովուրդներին իրադական դրամությունն ամենազեղեցիկ կերպով արտահայտված է Մոսկվայի Սահմանադրու-

թյան մեջ և արտացոլված իՍՆՄ-ի վարչական քարակղի վրա (միութենական հանրապետություններ, ավտոնոմ հանրապետություններ, ավտոնոմ մարզեր, ավտոնոմ շրջաններ):

Այսպիսով հակադրելով կապիտալիստների ղեկավարությունը ինքնաշարժային իշխանության ազդային ղեկավարականությունը, ուսուցիչը յերեխաներին մեջ դարգացնում է Լենինի — Ստալինի գործը շարունակելու մեծ ցանկությունը և ամբաստանելու իՍՆՄ-ի ժողովուրդների մեծ զաշինը, փորը հիմնված է համարաբար և յեղբայրության վրա, սոցիալիստական շինարարություն միասնական աշխատանքի վրա:

ԻՍՆՄ-ի աշխարհադրությունն ուսումնասիրելու ժամանակ Արդ դասարանի աշակերտները ծանոթանում են սոցիալիստական շինարարության պրակտիկայի հետ, մեր դարձանալի տնտեսական նվաճումների հետ, մեր հոկայական յերկրի ամբողջ ղեմքի արժատեղական վերակառուցման հետ:

Բեկուային դուռում փոխվում է ծովային արդյունադործության տեխնիկան: Փոքրիկ առադասանավերով ծովի վորսայու փոխարեն — տրաուլերների նավաբներ, փոքրաքանակ արդյունաբերողների խմբակներով ծովափից փոկերի փոսնդավոր վորսի փոխարեն — սառցահատներ և մոտոային նավերի միջոցով ձկնորսություն, յերբ դադանների տեղի մասին տեղեկություն է տրվում հետախույզության համար դուրս յեկած սափանակների ուղիներով: Ուսուցիչը նկարագրում է «Միբրյակովի», «Չեկոսկինի», «Լիսեյի» հերոսական երազեղիցիաները Յեվրոպայի և Ասիայի հյուսիսային ափերով, և փորպես այդ երազեղիցիաների արդյունք՝ 1935 թ. բացված ադրանբա — մարդատար նավահադրողակցությունը մեծ Հյուսիսային ճանապարհով: Նկարագրում է, թե ինչպես Հյուսիսային սառուցյալ տվկետանի ափերի և կղզիների վրա մի բաժի տասնյակ տերերութարանական կայաններ են հիմնված՝ յեղանակի նախատեսումը բարելավելու նպա-

տակներով, վորովհետև յեղանակն ըստ մեծի մասի «առաջանում և կադմավորվում է» հեռավոր հյուսիսում: Բուլշեիկներին կողմից Հյուսիսային բեկուի նվաճումը 1937 թ.: «Դերե-Ֆոդ կայանի», ձմեռողների, ողանալերի եակադրայի համարձակ իջեցումը սառուցյանի վրա իրենց անհրաժեշտ վողջ սարքավորմամբ: Անըման, աշխարհի հիացմունքը շարժող թուիչը Մոսկվայից Հյուսիսային բեկուի վրայով ԱՄՆ (Չկայով, Բայդուկով, Բեկյակով և Գրոմով, Դանիլին, Յոմաշև): Հոյակապ և սիստեմատիկ աշխատանքներն Արկտիկան ուսումնասիրելու գծով, վոր պարբերաբար կատարվում է մեր ձմեռողների և սառցահատներով կատարված հատուկ երազեղիցիաների միջոցով: Ահա համառոտ թվարկումը մեր մեր հաղթանակների և նվաճումների՝ ղեռ միայն բեկուային դուռում: Բայց հաղթանակներ և նվաճումներ նույնպիսի և էլ ավելի մեծ նշանակություն ման ինքնաշարժային Միության յուրաքանչյուր դուռում:

Արդ դասարանում իՍՆՄ-ի աշխարհադրության դասերին աշակերտությունը տրվող գիտելիքների վողջ հանրադուստրը պետք է նրանց հանդեպին այն գիտակցությունը, վոր հոյակապ և իր տեմպով դարձանալի արադ շինարարությունը, վոր ծավալված է աշխարհի մեկ վեցերորդ մասում, հարաավոր է միայն սոցիալիզմի սրաբաններում: Աշակերտները կենդանի և կոնկրետ նյութի վրա պետք է գիտակցեն այդ շինարարության մեջ կոմունիստական կուսակցության և ժողովուրդների առաջնորդ ընկեր Մոսկվին դերը: Յերեխաները պետք է բուռն սիրով և անձնվիրությամբ կադվեն կուսակցության և նրա առաջնորդի հետ: Դրա հետ մեկտեղ նրանք պետք է լցվեն ալրող առելություն դեպումով ղեպի ժողովուրդի բոլոր թշնամիները — սոոր դավաճանները և մատնիչները, յրտեսներն ու ղեկերսանները, միջադրային Փաշիզմի վարձկանները, տրոցկիստները, դաշնակցականները:

Ուսուցիչը պարտավոր է սոցիա-

լիստական շինարարություն Փոնի վրա ցույց տալ մեր յերկրի անվանի մարդկանց: Շմիդտի, Չկայովի, Գրոմովի, Մոսկանովի, Դեմենկոյի և մյուսների անունները պետք է հայտնի լինի յերեխաներին: Այս անվանի մարդկանց կյանքն ու գործունեությունը, նրանց հոգատար և բաղմակողմանի նախապատրաստումը հանձնարարած գործի նկատմամբ, անձնադուստրությունը, բոլոր արգելքները հաղթահարելու կարողությունը պետք է դառնան վողջ միայն որինակ՝ դպրոցների սղադա գործունեությունը համար, այլև կենդանի որինակ հենց ընթացիկ ուսումնական աշխատանքի համար:

Այս բոլորը հարավորություն է տալիս դարգացնել յերեխաներին մեջ խորհրդային հայրենասիրության վողին: Այդ դեպումները մասին մենք կարդում ենք «Իզվեստիա»-ի 1937 թ. սեպտեմբերի 26-ի համարում հետևյալ նշանակալից տողերը.

«Հայրենիք: Ինչքան շատ բան է առում իՍՆՄ-ի քաղաքացու սրտի և գիտակցությանն այս պարզ և մոտիկ բառը: Նրա մեջ իրենց արտացոլում են դանում խորհրդային հայրենասերների ամենալավ, ամենաբարձր և ամենաազնիվ դեպումները: սեր ղեպի իր յերկրը, հպարտություն իր ժողովրդի նկատմամբ, նրա անխորտակելի հզորությունը գիտակցությունը և անձնվեր պատրաստակամությունը ծառայելու նրան, իսկ յեթե անհրաժեշտ է, տալ նրան և կյանքը:

Դարեր և հազարավայկներ այդ բառն արտասանվել է դանադան ձեկով, դանադան դասակարգերի պատկանող և հասկացողությունների տեր մարդկանց կողմից: Մոտավորապես մեկ տե կես դար առաջ իշխանությունը գլուխ բարձրացող Փրանսիական բուրժուազիան սերը ղեպի հայրենիքը հայտարարեց մարդու միակ արժանավոր ըդդադումները — կիրքը: Նրան հաջողվեց այդ յողունդով համախմբել և վորքի հանել ժողովրդ-

դատական մասնասնները յեվրոպական
Ֆեդերալական ռեակցիայի դեմ՝
վոր յերիտասարդ բուրժուական
հանրադեմոկրատիայի գոյության
համար վտանգ եր հանդիսա-
նում։ Բայց հենց ինքը, բուր-
ժուազիան, հայրենասիրական
այդ զգացմունքների փոխնց չա՜
ճեռք բերելու կրքով։ Այդ լու-
ծունեղի հեղինակները հենց իրենք
վտանահարեցին ու կեղտոտեցին
այն։ Յեւ միայն ժողովուրդն եր
նախաժ այդ լուծունեղին։ Ամե-
նաբարձր հերոսությամբ նա
պաշտպանում եր իր յերկիրն ու-
տարերկրյա ամպղակներէց։
Հենց այդ ժամանակներում եր
ծագեց Մարտիի ինկուլոր աֆո-
րելը՝ «Չբաւորներն դասակար-
գը — հայրենասերներն միակ
դասակարգն եւ»։

Այս, միայն ժողովուրդին և ընդունակ աչքիով և անձնուրաց կերպով սիրել իր հայրենիքը։ Այս հզոր զգացումը մեկ անգամ է, վոր կապիտալիզմն ուղտագործել է իր շահերի ու նպատակներին համար, միլիոնավոր աշխատավորներին դեպի մահ ուղարկելով՝ բանկիրներին և ֆարքիկանտների շահույթին ապեղացնելու համար։ Այն ժամանակ, յերբ կեղծ հայրենասիրական լոգոնալներով խաբված մասնաները վոնջանում եյին իրեն չպատկանող «հայրենիք» իրաժաններում պաշտպանելով նրանց թիկունքում «թողանովներին թաղավորները» կատարում եյին զոհելի պործարքներ։ 1914-1918 թվերի համաշխարհային պատերազմի ժամանակ բրիտանական զինվորները ջոկատ առ ջոկատ գնդակահարվում եյին Դարգանելի մոտ հենց բրիտանական թողանովներով, վոր վաճառվել եր հակառակորդին ձեռնառու գնով։ Այսպես եյին «պաշտպանում հայրենիքը» Արմատորները, Չախարովները և կրոնայները։ Հայրենիքը նրանց համար նույնպիսի մի ապրանք եր, ինչպես վառողը, գնդացիները

և գաղերը : Ֆաշիստական ավան-
ալյուրիստ Թրանկոլոյի համար նա
ե՛լ ալիքի եփան արժի, քան
գերմանական «Յունիֆրոնները» և
խաչակալան «Ֆիաունները», վո-
րոնք վոչնչացնում են գեմոկրա-
տական Իսպանիայի կանանց ու
յերերխաներին :

ԻՐ իտալական լեմատորը և իր իտալական բազմադարձ թյուրմարտերը հայերենի բառն առաջին անգամ բառացի բանալորները և գլուխացիները սոցիալիստական պետության մեջ: Խորհրդային իշխանությանը ԽՍՀՄ-ի աշխատավորությանը վերագրվող շահագործողների կողմից գողացված հայերենի բառերը»:

Ինչ պետք է ընդգծի ուսուցիչ՝
խորհրդային հայրենասիրությունը
յերեսաների մեջ զարգացնելու հա-
մար, թեկուզ Ա-բդ զսասարանի աշ-
խարհազույթյան առաջին թեման —
«ԽՍՀՄ-ի համառոտ տեսությունը
Ֆիյիքական քարտեզով» անցնելիս :

Խորհրդային Միությունը — դա-
լայածափավ մի յերկիր է։ Նա ըն-
կած է յերկրու աշխարհամասերի և
յերկու ջերմոցին գոտիների վրա։ Նա
վազողովում է յերեք ուղիկանոսների
ջրերով։ ԽՍՀՄ-ի արևմտյան սահմա-
նից դեպի արևելյան սահմանը՝
Միսոկ — Վլադիվոստոկ յերկաթու-
գային մագլիստրայով ձեպընթացը
գնում է 13 օրում։ Յերբ ամռանն
բեզակը մայր է մտնում մեր արև-
մլայան սահմանում՝ ԲիՍՀ-ում, նա
նոր է ծագում Զուկոտյան թերա-
կզզում։ ԽՍՀՄ-ի տերիտորիան բը-
նակված ցամաքի մեկ վեցերորդ մա-
սըն է։ ԽՍՀՄ-ի տերիտորիայի վրա
կարող էլին տեղափորվել կապիտա-
լիստական շատ խոշոր յերկրների
տերիտորիաներ — ԱՄՆ, Անգլիան,
Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան,
Ճապոնիան — և դեռ էլի շատ աղատ
տեղ կլնար (չիտել դասագրքում
տված նկարը)։ Տերիտորիայի մե-
ծությունը ԽՍՀՄ-ի հզորության
տարբերից մեկն է։

Ծանոթացնելուի ԽՍՀՄ-ի ծովային
և ցամաքային սահմաններին, ուսու-
ցիչը պատմում է նրանց յերկարու-

թյան մասին (մոտավորապես 60 հա-
զար մլյմ, ախլինքն չուրջերկրյա
մեկ ու կես ճանապարհը դուրսում),
մեր հարեանների մասին, պարզաբա-
նում և ուղղակի վտանգավորու-
թյան ոջախները, պատմում և կա-
միր Բանակի և Նախատորմի հզորու-
թյան մասին, նրանց տեխնիկական
հաղեցվածության մասին, Կոմու-
նիստական Կուսակցության մոլորից
դատախարակված մարտիկների բարձր
զաղափարական թաղաքական մակար-
դակի մասին, իՍԶՄ հերոս — ան-
վախ, ողաչունների մասին, վառա-
պանձ ուսմանադահների մասին,
վորոնք սմբողջ սրն ստեն տեսակ
յեղանակին Արեմտյան սահմանների
անտառներում և ճահիճներում, հա-
րավային սահմանների լեռնային
բարձրունքներում, Հեռավոր Արևել-
քի տալգայի թավրտներում աչա-
լուրջ պաշտպանում են մեր յերկիրը
լրեսանների և դիվերսանտների ներ-
խուժումից: Ողախելով լրագրային
նյութերից, ուսուցիչը ցույց է տա-
լիս, թե ինչպես սահմանակից վայ-
րերի բնակչութունը, ալը թվում
և յերեսանները, ողնում են Ներքին
Գործոց Ժողովրդական Կոմիտայի-
տի զորքերին՝ նրանց պատվավոր և
դատախանաատու աշխատանքում:

Բնական գոտիների ուսումնասիրության ժամանակ ուսուցիչը թվում է մեր յերկրի հոյակապ բնական հարստությունները, պարզաբանում է նրանց նշանակությունը մեր յերկրի հետագա պարզացման համար, ցույց է առաջի, թե ինչպիսի հեռանկարներ մենք ունենք հետագայում ունեցու-թյունն է՝ ապիսի բարձրացնելու առ-պարիպում, հիշում է, թե ինչպես ինտելլիգենտները քաղաքացիական

պատերազմները ժամանակ աչք ելին դրել խորհրդային Հյուսիսի, Կովկասի, Միջին – Ասիայի և Սիբիրի հարևանությոնների վրա և թե ինչպես ֆաշիստներն այսօր էլ շարունակում են աչք դնել մեր հարևանությոնների վրա: Ուսուցիչը հոգ է տանում, վոր դպրոցական ջենքի պատերի վրա աշակերտները կարողանան կարդալ հետևյալը.

